ՀՏԴ 327

Տնտեսագիտություն

Ռուզաննա ՄԱՆԳԱՍԱՐՅԱՆ
ԱրՊՀ տնտեսագիտության տեսության և
կառավարման ամբիոնի դոցենտ, տ.գ.թ.

ԱՀ-ՈՒՄ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԼԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԵՂՄԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՈՒՂԻՆԵՐԸ

Հոդվածում դիտարկվում են ԱՀ-ում հետպատերազմյան շրջանում առկա սոցիալական հիմնախնդիրները, կառավարության կողմից իրականացվող աջակցության ծրագրերը և դրանց արդյունքները: Հատուկ ուշադրություն է դարձվում երկրի բնակչության աղքատության մակարդակը բնութագրող ցուցանիշների վերլուծությանը և կատարվում համեմատական եզրահանգումներ: Կարևորվում է ինչպես բնակչության նյութական աղքատության մակարդակի, այնպես էլ ոչ նյութական աղքատության մակարդակի գնահատումը՝ առանձնացնելով համապատասխան բնորոշիչները:

Առաջարկվում են երկրում սոցիալական լարվածության մեղմացմանն ուղղված կոնկրետ միջոցառումներ, որոնք ընդգրկում են այն ուղղությունները, որոնցում ԱՀ-ն ունի մրցակցային առավելություններ՝ միաժամանակ նվազագույնի հասցնելով թույլ և խոցելի կողմերը: Այդ առումով, հիմնավորվում է, որ գյուղատնտեսությունը, եկամուտների վերաբաշխման համակարգը, ներդրումային քաղաքականությունը, կրթության բնագավառը, աշխատաշուկան այն հիմնական ուղղություններն են, որոնց բարելավման արդյունքում հնարավոր կլինի ապահովել կայուն տնտեսական աճ և աղքատության մակարդակի կրճատում:

Բանալի բառեր՝ *սոցիալական հիմնախնդիրներ, սոցիալական լարվածություն, աղքատության մակարդակ, բնակարանային ապահովություն, կենցաղային ապահովություն, առողջապահության ոլորտ, նյութական*

աղքատություն, ոչ նյութական աղքատություն, աղքատության սրություն, աղքատության խորություն, սոցիալական աջակցություն:

Р. Мангасарян

ВОЗМОЖНЫЕ ПУТИ СМЯГЧЕНИЯ ПОСЛЕВОЕННОЙ СОЦИАЛЬНОЙ НАПРЯЖЕННОСТИ В РА

В статье рассматриваются социальные проблемы, существовавшие в послевоенный период в Арцахе, программы поддержки, осуществляемые правительством и их результаты. Особое внимание уделено анализу показателей, характеризующих уровень бедности населения страны, сделаны сравнительные выводы. Важно оценить как уровень материальной бедности населения, так и уровень нематериальной бедности, выделяя соответствующие характеристики.

Предлагаются конкретные меры, направленные на снижение социальной напряженности в стране, охватывающие сферы, в которых РА имеет конкурентные преимущества при минимизации слабых и уязвимых сторон. В этом смысле обосновано, что сельское хозяйство, система перераспределения доходов, инвестиционная политика, сфера образования, рынок труда являются основными направлениями, в результате совершенствования которых можно будет обеспечить устойчивый экономический рост и снижение уровня бедности.

Ключевые слова: *социальные проблемы, социальная напряженность, уровень бедности, жилищная обеспеченность, бытовая обеспеченность, сфера здравоохранения, материальная бедность, нематериальная бедность, острота бедности, глубина бедности, социальная поддержка.*

R.Mangasaryan

POSSIBLE WAYS TO MITIGATE POST-WAR SOCIAL TENSION IN THE RA

The article deals with the social problems that existed in the post-war period in Artsakh, the support programs implemented by the government and their results. Particular attention is paid to the analysis of indicators characterizing the level of poverty of the country's population and comparative conclusions are drawn. It is important to assess both the level of material poverty of the

population and the level of non-material poverty, highlighting the relevant characteristics.
Specific measures are proposed aimed at reducing social tension in the country, covering areas in which the Republic of Artsakh has competitive advantages while minimizing weaknesses and vulnerable parties. In this sense, it is substantiated that agriculture, the system of income redistribution, investment policy, education, the labour market are the main areas, as a result of the improvement of which it will be possible to ensure sustainable economic growth and reduce poverty.
Key words: *social problems, social tension, poverty level, housing provision, household provision, health care, material poverty, non-material poverty, poverty severity, poverty depth, social support.*

Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմի հետևանքով Արցախում մեծացել է սոցիալական լարվածությունը: Պատերազմը տնտեսությանը պատճառեց հսկայական վնասներ: Թշնամու վերահսկողության տակ անցավ 110 համայնք, ունենք ավելի քան 31 220 տեղահանված անձ: Ստեղծված իրավիճակում ԱՀ և ՀՀ կառավարությունների կողմից իրականացվեցին մի շարք աջակցության ծրագրեր, որոնք ներառում են տարբեր ուղղություններ՝ ֆինանսական աջակցություն, կացարանի տրամադրում, զբաղվածություն և այլն: Վերջիններս ներկայացված են հավելված 1-ում:

Բոլոր ծրագրերը միտված են թոթափելու արցախցիների սոցիալական բեռը՝ հիմքում որպես նախապայման, ունենալով սոցիալական զարգացումն անելիքների ուղենիշ ընտրելու կարևորագույն դրույթը: Այնուամենայնիվ, սոցիալական պաշտպանության ծրագրերի անհրաժեշտությունը զգալիորեն գերազանցում է այդ ծրագրերի ֆինանսավորման համար առկա ֆինանսական հնարավորությունները: Այդ պայմաններում, արդյունավետ միջոց է համարվում ծրագրերի և ռեսուրսների մեծ մասի ուղղվածությունը բնակչության ամենակարիքավորներին: Կարծում ենք, ներկայում ԱՀ սոցիալական զարգացման և միգրացիայի նախարարության ծրագրային անելիքների առաջնահերթություններում պետք է կարևորել գործող աջակցության ծրագրերից նպատակային անցումը դեպի զարգացման ծրագրերի, որոնք կնպաստեն բնակչության շրջանում զբաղվածության խթանմանն ու ապահովմանը՝ սոցիալական կայուն զարգացման նորագույն մեխանիզմների ներդրման միջոցով:

Արցախի Հանրապետությունը ցածր միջին եկամտով, 2020թ. տվյալներով՝ բնակչության մեկ շնչի հաշվով 3722 ԱՄՆ դոլար ՀՆԱ ունեցող

երկիր է: Աղքատության կրճատումը Արցախի կառավարության համար միշտ եղել է առաջնահերթություն: Պատերազմը էլ ավելի ուժեղացրեց սոցիալական լարվածությունը և իր ազդեցությունը թողեց նաև աղքատության մակարդակի վրա: Մինչև պատերազմը ԱՀ-ում աղքատության մակարդակը բնութագրող ցուցանիշները ունեին նվազման միտում, որը ներկայացված է աղյուսակ 1-ում.

Աղյուսակ 1

Աղքատության մակարդակի ցուցանիշների դինամիկան 2016-2020թթ.[1] ***(տոկոսներով)***



Աղյուսակի տվյալներից տեսանելի է, որ 2016-2019թթ. ընթացքում աղքատության մակարդակը իջել է 4,3 տոկոսային կետով: 2019թ. աղքատ էր համարվում բնակչության 21,9%-ը (աղքատության պարենային գիծը կազմում է 36 218 ՀՀ դրամ): Բնակչության ավելի քան 5,3 %-ը ապրում էր ազգային ծայրահեղ աղքատության շեմից ցածր (ամսական 24 728 ՀՀ դրամ) պայմաններում: Չնայած այն հանգամանքին, որ 2020թ-ին ԱՀ տնտեսությունը անկում է ապրել՝ աղքատության մակարդակը վիճակագրորեն գրեթե չի փոփոխվել, նախորդ տարվա համեմատ այն նվազել է 0.5 տոկոսային կետով (21.9 տոկոսից մինչև 21.4 տոկոս): 2020թ., ինչպես և նախորդ 5 տարիների ընթացքում, Արցախում աղքատության մակարդակը չի գերազանցել 2014թ. աղքատության մակարդակը (26.2

[1] *Աղբյուրը՝ ԱՀ ԱՎԾ:*

տոկոս): Ծայրահեղ աղքատության մակարդակը ամբողջ բնակչության մեջ կազմել է 4.2%, նախորդ տարվա 5.3%-ի փոխարեն:

Ընդգծենք, որ աղքատության խորությունը հաշվարկվում է միայն աղքատ բնակչության հաշվով, այն ցույց է տալիս աղքատության պակասուրդը, այսինքն՝ թե որքանով է աղքատների միջին եկամուտը (կամ սպառումը) ցածր աղքատության գծից: Աղքատության խորությունը 2020թ. կազմել է 3.9 %, նախորդ տարվա 5 %-ի փոխարեն: Նշենք նաև, որ աղքատության խորության գնահատականը ցույց է տալիս, որ եթե երկիրը հնարավորություն ունենար յուրաքանչյուր անհատի հաշվով (և աղքատ, և ոչ աղքատ) հավաքագրելու աղքատության գծի 3.9 %-ին համարժեք ռեսուրսներ, և եթե այդ ռեսուրսները հատկացվեին աղքատներին, ապա աղքատությունը տեսականորեն կվերանար, ենթադրելով, որ աղքատներին ուղղված աջակցությունն ամբողջությամբ հատկացվում է աղքատներին:

Աղքատության սրությունը արտահայտում է աղքատների միջև եղած անհավասարությունը: Այն արտացոլում է այն փաստը, որ որոշ աղքատների սպառումը շատ է հեռու աղքատության գծից, իսկ որոշ աղքատներինը՝ շատ մոտ: 2020 և 2019թթ. այն համապատասխանաբար կազմել է 1.3% և 2.1%:

2020թ. աղքատության ընդհանուր և ծայրահեղ աղքատության գծերը, արտահայտված մեկ չափահաս անձի հաշվով, մեկ ամսվա համար գնահատվել են՝ 36 483 դրամ և 24 901 դրամ: Աղքատության գծերի դինամիկան 2016-2020թթ. ընթացքում ներկայացված է գծապատկեր 1-ում:[1]



[1] *Աղբյուրը՝ ԱՀ ԱՎԾ:*

Գծապատկեր 1

Գծապատկերից տեսանելի է, որ աղքատության պարենային գծի 2020թ. և 2016թ. դրամային ցուցանիշների տարբերությունը կազմում է 1321դր, որի տոկոսային աճը կազմել է 5.6%, իսկ աղքատության ընդհանուր գծում տարբերությունը կազմում է 1341 դր, որը տոկոսային արտահայտությամբ կազմում է 3.8%:

Համեմատության համար աղքատության ցուցանիշները ներկայացնենք նաև տարածաշրջանի այլ երկրների համար / գծապատկեր 2/[1]:



Գծապատկեր 2. Աղքատության մակարդակը տարածաշրջանի երկրներում 2017-2018թթ

Գծապատկերից տեսանելի է, որ ՀՀ-ում 2019թ. աղքատության մակարդակը կազմել է 26,4%, իսկ ծայրահեղ աղքատ բնակչության մակարդակը՝ 1,4%: Ընդ որում 2018թ. դրությամբ երկրում աղքատության ցուցանիշները ավելի ցածր մակարդակի են, քան Բելոռուսիայում և Տաջիկստանում:

Վերոնշյալ ցուցանիշները հնարավորություն են տալիս բնակչության նյութական աղքատության մակարդակը, մինչդեռ արդի պայմաններում

[1] *Աղբյուրը՝ https://www.armstat.am , https://www.worldbank.org , http://www.cisstat.com*

կարևորվում է նաև ոչ նյութական աղքատության գնահատումը, որի բնորոշիչներն են՝ վատ առողջությունը, կրթական ցածր մակարդակը կամ անգրագիտությունը, սոցիալական անտեսվածությունը կամ մերժվածությունը, անպաշտպանվածությունը, իրավունքների և խոսքի ազատության անկիրառելիությունը, այն է՝ գործնականում սեփական խնդիրների մասին հայտնելու անկարողությունը: Կարծում ենք, որ ոչ նյութական աղքատության հաղթահարման հիմնական ուղղությունը կրթական, առողջապահական և սոցիալական ծառայությունների մատչելիության բարելավումն է, այն է՝ անվճար ծառայությունների հասցեականության առավել հստակությունը և վճարովի ծառայություններից օգտվելու կարողությունների աճը և այլն:

Առողջ բնակչությունը ոչ միայն որոշիչ նախապայման է երկրի սոցիալ-տնտեսական առաջընթացի, այլև կարևոր նախադրյալ՝ թե՛ տնային տնտեսությունների, թե՛ հենց անհատի զարգացման համար: Մինչև 2020թ. ԱՀ-ում որոշակի առաջընթաց է ապահովվել առողջ ապրելակերպի և բարեկեցության խթանման գործում, չնայած Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի (ԵԿԱ) շատ երկրների համեմատ ունեինք բավական ցածր պետական ֆինանսավորում: Դիտարկումները ցույց են տալիս, որ բնակչության մեկ շնչի հաշվով բժիշկների թիվը բարձր էր և համապատասխանում էր միջազգային չափանիշներին: Այսպես, 2019թ. 1000 բնակչությանը բաժին էր ընկնում 2.5 բժիշկ (քաղաք Ստեփանակերտի ապահովվածությունը 4,5 է, իսկ շրջաններում տատանվում է 0,8-1,7 սահմաններում:): Հիշյալ ցուցանիշը մոտ էր աշխարհի միջին չափանիշներին՝ միջին եկամուտ ունեցող երկրների համար՝ 2.9[1]:

Կարծում ենք, որ հետպատերազմյան շրջանում առողջապահության ոլորտի բազմաթիվ ցուցանիշների բարելավման կարող ենք հասնել առողջապահության ոլորտում պետական կամ մասնավոր ծախսերի ավելացման և առողջապահական ծառայությունների որակի և մատչելիության մակարդակի բարձրացման միջոցով: Առողջության ապահովագրության և էլեկտրոնային առողջապահության համակարգերի լայն կիրառման խթանումը նույնպես կարևոր է, քանի որ այն կարող է զգալիորեն նպաստել առողջապահական համակարգի զարգացմանը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ԱՀ-ում աղքատության մակարդակը ցածր է միջնակարգ մասնագիտական և բարձրագույն կրթություն ունեցող բնակչության շրջանակում /աղյուսակ 2/[2]:

---

[1] *Տես՝ Համաշխարհային բանկ, https://data.worldbank.org/indicator/*

[2] *Աղբյուրը՝ ԱՀ ԱՎԾ:*

Աղյուսակ 2. Աղքատությունն ըստ կրթության մակարդակի, 2018-2019թթ (16 և բարձր տարիքի բնակչություն)

(տոկոսներով)

	2018թ.				2019թ.			
	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	%-ն աղքատ բնակչության մեջ	%-ն ընդհանուր բնակչության մեջ	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	%-ն աղքատ բնակչության մեջ	%-ն ընդհանուր բնակչության մեջ
Տարրական և ցածր	7.6	28.3	2.4	1.7	2.4	15.6	0.9	**1.2**
Թերի միջնակարգ	6.8	21.8	12.8	11.9	5.3	22.4	10.9	**10.1**
Միջնակարգ ընդհանուր	5.5	23.3	36.9	32.1	7.1	25.2	39.1	**32.2**
Միջնակարգ մասնագիտական	3.2	19.0	24.5	26.2	4.1	19.7	29.3	**30.9**
Բարձրագույն	3.6	16.9	23.4	28.1	3.3	16.1	19.8	**25.6**
Ընդամենը	4.6	20.3	100.0	100.0	5.0	20.8	100.0	**100.0**

Աղյուսակի տվյալներից տեսանելի է, որ 2019թ. բարձրագույն կրթություն ունեցող անձաց մեջ աղքատության մակարդակը կազմել է 3,3%: Ուստի կրթությունը ևս ՀՆԱ-ի և աղքատության մակարդակի վրա անմիջական ներգործություն ունեցող գործոն է: Այն կարող է օգնել մարդկանց դուրս գալ աղքատությունից, դռներ է բացում աշխատանքի առջև: Կրթությունը տալիս է մարդկանց գիտելիք և հմտություններ, որոնք անհրաժեշտ են եկամուտների ավելացման և զբաղվածության ընդլայնման համար: Երբ կրթությունն ունի լայն տարածում և հասանելի է աղքատներին, կանանց և խոցելի խմբերին, ապա այն ունի նաև տնտեսական աճի լայն վերաբաշխվածության հեռանկար:

Դիտարկումները ցույց են տալիս, որ երկրում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև բնակչության բնակարանային և կենցաղային ապահովությանը, հատկապես ստեղծված իրավիճակում, երբ թշնամու վերահսկողության տակ անցած տարածքներում բնակվող ավելի քան 38 154

քաղաքացի մնացել է անօթևան: ԱՀ-ում 2019թ. տնային տնտեսությունների գերակշիռ մասը (82.7%-ը) հանդիսանում էր իր կացարանի սեփականատերը: Գյուղական բնակավայրերում տնային տնտեսությունները գլխավորապես բնակվում էին առանձնատներում՝ 98.1%-ը: Կացարանների ծանրաբեռնվածությունը լուրջ խնդիր է երկրում: 2019թ-ի ԱՀ ԱՎԾ կողմից կատարված հետազոտության տվյալներով մեկ սենյականոց բնակարանների ծանրաբեռնվածությունը կազմել է 3.2 մարդ: Ակնհայտ է, որ կացարանների ծանրաբեռնվածությունը կախված է աղքատության մակարդակից: Ներկայում այս խնդիրը ավելի քան հրատապ է, հաշվի առնելով նաև այն հանգմանքը, որ մոտ 1 200 տեղահանված անձ բնակվում է ԱՀ-ում գործող հյուրանոցներում:

Ընդհանրական ձևով նշենք, որ արդի պայմաններում ԱՀ-ում աղքատության մակարդակի վրա ներգործություն են ունենում.

ա) ազգային անվտանգությունը,
բ) քաղաքական անկայունությունը,
գ) երկրի սոցիալական քաղաքականությունը,
դ) զբաղվածության մակարդակը,
ե) տրանսֆերտների և աշխատավարձի ցածր մակարդակները և այլն:

Կարծում ենք, որ երկրում սոցիալական լարվածության մեղմացմանն ուղղված կոնկրետ միջոցառումները պետք է ընդգրկեն այն ուղղությունները, որոնցում ԱՀ-ն ունի մրցակցային առավելություններ՝ միաժամանակ նվազագույնի հասցնելով թույլ և խոցելի կողմերը: Այդ առումով, գյուղատնտեսությունը, եկամուտների վերաբաշխման համակարգը, ներդրումային քաղաքականությունը, կրթության բնագավառը, աշխատաշուկան այն հիմնական ուղղություններն են, որոնց բարելավման արդյունքում հնարավոր կլինի ապահովել կայուն տնտեսական աճ և աղքատության մակարդակի կրճատում:

Վերոհիշյալից ելնելով՝ առաջարկում ենք ԱՀ-ում իրականացվող սոցիալական քաղաքականությունը նպատակաուղղել ոչ թե մարդու կենսաբանական գոյատևման նվազագույնի ապահովմանը, այլ որպես հասարակության անդամի՝ նրա կյանքին լիարժեք մասնակցության հնարավորության ձևավորմանը: Դա նշանակում է, որ սոցիալական պայմանների վատթարացումը չպետք է նվազեցնի մարդու զարգացման հնարավորությունը, իսկ սոցիալական նպաստների քաղաքականությունը պետք է լուծի հենց այդ խնդիրը: Այս տեսանկյունից հարցին մոտենալու դեպքում, կարելի է նկատել, որ աղքատ խավերի նկատմամբ ԱՀ-ում իրականացվող սոցիալական ծրագրերը չեն լուծում հիշյալ խնդիրը: Մյուս կողմից, այդ քաղաքականությունը թույլ չի տալիս իրականում գրանցել ու սոցիալական նպաստառուների ցուցակներում ընդգրկել օժանդակության կարիք ունեցող աղքատների ու սոցիալապես անապահով խավերին պատկանող տնտեսությունների մի զգալի մասը: Նշված խնդիրների լուծումը պահանջում է սոցիալապես անապահովներին ցուցաբերվող քաղաքականության հասցեականությունը բարձրացնող միջոցառումներ: Դա հնարավորություն

կտա, որ սոցիալական նպաստառուների ցուցակում ընդգրկվեն իրականում կարիքավոր տնային այն տնտեսությունները, որոնք հաշվառման մեխանզիմների ու չափանիշների անկատարության հետևանքով դուրս են մնացել այդ ցուցակներից: Կարևոր է նաև սահմանագծային կարգավիճակում գտնվող անհատների համար մշակել սոցիալական ծառայությունների մատուցման այնպիսի փաթեթներ, որոնք թույլ կտան բավարարել նրանց մարդկային զարգացման նվազագույն պահանջները:

Այսպիսով, ընդհանրացնելով կարելի է եզրակացնել, որ գոյություն չունի աղքատության մակարդակի կարգավորման միասնական պարզ մոդել: Սակայն պետության տնտեսական և սոցիալական քաղաքականությունների շարունակական կատարելագործումը կարող է նպաստել աղքատության մակարդակի զգալի կրճատմանը և նոր աշխատատեղերի ստեղծմանը: Այդ առումով, ԱՀ-ում աղքատության դեմ պայքարի նպատակով անհրաժեշտ է մշակել պետական և տարածաշրջանային համալիր ծրագրեր, որոնք պետք է ներառեն աղքատության պատճառների վերլուծությունները և այն նվազեցնող կոնկրետ միջոցառումները:

Գրականություն

1. ԱՀ վիճակագրական տարեգիրքեր 2016-2020 թթ., Ստեփանակերտ, ԱՀ ԱՎԾ 2016-2020 թթ.:
2. «Արցախում հաշվառված քաղաքացիներին աջակցության միջոցառումը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության N 1799-Լ որոշում, ընդունված է 16.11.2020:
3. «2020 թվականի սեպտեմբերի 27-ից Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության դեմ սկսված պատերազմական գործողությունների հետևանքով Ադրբեջանի Հանրապետության վերահսկողության տակ անցած համայնքներում հաշվառված քաղաքացիների աջակցության միջոցառումը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության N 1820-Լ որոշում, ընդունված է 21.11.2020:
4. «Արցախի Հանրապությունում հաշվառված և հաշվառման կամ փաստացի բնակման հասցեում գտնվող բնակելի անշարժ գույքը Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմի պատճառած ավերածությունների հետևանքով կամ այլ

պատճառներով կորցրած քաղաքացիների աջակցության միջոցառումը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության N 2021-Լ որոշում, ընդունված է 10.12.2020:

5. «Պատերազմի հետևանքով Արցախի Հանրապետությունից տեղահանված կամ Արցախի Հանրապետությունում բնակելի անշարժ գույքը կորցրած քաղաքացիներին 6 ամիս ժամկետով ամսական դրամական օգնություն տրամադրելու միջոցառոըմը և կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության N 1709-Լ որոշում, ընդունված է 18.10.2021:
6. «2020 թվականի սեպտեմբերի 27-ից Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության ուղղությամբ սկսված ռազմական գործողությունների հետևանքով Արցախի Հանրապետության վերահսկողությունից դուրս մնացած համայնքներում հաշվառված չափահաս քաղաքացիներին ժամանակավոր հյուրընկալողների ծախսերի փոխհատուցման վեցամսյա սոցիալական աջակցության միջոցառումը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության N 1997-Լ որոշում, ընդունված է 03.12.2020:
7. «2020 թվականի սեպտեմբերի 27-ից Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության ուղղությամբ սկսված պատերազմական գործողությունների հետևանքով քաղաքացիական անձանց շրջանում զոհերի, ինչպես նաև անհայտ կորածների ընտանիքներին և հաշմանդամություն ձեռք բերած անձանց սոցիալական աջակցության տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության N 2082-Լ որոշում, ընդունված է 17.12.2020:
8. Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով անհայտ կորած զինծառայողների ընտանիքների աջակցության միջոցառումը

հաստատելու մասին» ՀՀ Կառավարության N 2001-Լ որոշում, ընդունված է 10.12.2020:

9. «Արցախի Հանրապետությունում հաշվառված կամ փաստացի բնակված քաղաքացիներին 4 ամիս ժամկետով ամսական դրամական օգնություն տրամադրելու միջոցառումը հաստատելու մասին», ՀՀ Կառավարության N 186-Լ որոշում, ընդունված է 12.02.2021:
10. «ԱՀ-ում հաշվառված կամ փաստացի բնակված առանձին խմբերի անձանց համար միանվագ դրամական օգնություն սահմանելու և միանվագ դրամական օգնության նշանակման ու վճարման կարգը հաստատելու մասին» ԱՀ Կառավարության N 1390-Ն որոշում, ընդունված է 20.12.2021:
11. «2020 թվականի սեպտեմբերի 27-ին ԱՀ դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների հետևանքով ԱՀ վերահսկողությունից ժամանակավոր դուրս մնացած բնակավայրերում հաշվառված քաղաքացու մահվան դեպքում թաղման նպաստ սահմանելու և թաղման նպաստի նշանակման ու վճարման կարգը հաստատելու մասին» ԱՀ Կառավարության N 893-Ն որոշում, ընդունված է 10.08.2021:
12. «2020 թվականի սեպտեմբերի 27-ից Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմի ընթացքում մարտական գործողությունների մասնակից անձանց սովորող երեխաների և սովորող ամուսնու ուսման վարձի փոխհատուցման միջոցառումը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության N 2008-Լ որոշում, ընդունված է 10.12.2020:
13. «ԱՀ պաշտպանության ժամանակ մարտական գործողություններին մասնակցելու հետևանքով, ինչպես նաև ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների նպաստառու երեխաներին միանվագ դրամական օգնություն տրամադրելու մասին» ԱՀ

Կառավարության N 464-Ն որոշում ընդունված է 30.07.2009:
14. «2020 թվականի սեպտեմբերի 27-ին ԱՀ դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների հետևանքով դժվար կացության մեջ հայտնված ֆիզիկական և իրավաբանական անձանց վարկային պարտավորությունների կատարմանն ուղղված պետական ֆինանսական աջակցության ծրագիրը հաստատելու մասին» ԱՀ Կառավարության N 222-Ն որոշում, ընդունված է 17.03.2021:
15. «2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների հետևանքով զոհված (մահացած) և անհայտ բացակայող ճանաչված անձանց ընտանիքների, 1-ին խմբի անժամկետ հաշմանդամ ճանաչված և (կամ) անօթևան մնացած անձանց բնակարանային ապահովման ծրագիրը հաստատելու մասին» ԱՀ Կառավարության 2021 թվականի հուլիսի 2-ի N 705-Ն որոշում
16. https://data.worldbank.org/indicator/SH.MED.PHYS.ZS?end=2016&locations=EU&start=1960
17. *https://www.armstat.am , https://www.worldbank.org , http://www.cisstat.com*
18. https://employment.am/am/online_application.html
19. https://dimum.ssa.am/index.php?r=application%2Fwounded-app
20. http://mss.nkr.am/?p=20905

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, տ.գ.դ. Թ.Ն.Մանասերյանը:

Հավելված 1

Ֆինանսական աջակցության ծրագրեր

· Պատերազմի հետևանքով տեղահանված և փաստացի ՀՀ-ում կամ Արցախում գտնվող Արցախի քաղաքացիներին, որոնք ունեն Արցախի հաշվառում, բացառությամբ Արցախի պետական կամ համայնքային բյուջեից աշխատավարձ ստացող անձանց, Հայաստանի Հանրապետությունում աշխատող անձանց կամ անհատ ձեռնարկատերերին և 18-58 տարեկան արական սեռի անձանց (բացառությամբ 1-ին և 2-րդ կարգի հաշմանդամների) տրամադրվել էր միանվագ դրամական օգնություն յուրաքանչյուրի համար նվազագույն ամսական աշխատավարձի չափով (68,000 ՀՀ դրամ), ինչպես նաև կեցավայրի համար տրամադրվել է լրացուցիչ աջակցություն՝ 15,000 դրամի չափով այն շահառուներին, ովքեր չունեն սեփականության (այդ թվում՝ բաժնային) իրավունքով Հայաստանի Հանրապետությունում գտնվող անշարժ գույք[1]:

· Հետպատերազմյան ծանր սոցիալական վիճակը մեղմելու նպատակով աջակցության երկրորդ միջոցառումը պատերազմի հետևանքով տեղահանված և փաստացի Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախում գտնվող Արցախի քաղաքացիների համար էր, որոնք ունեն Ադրբեջանի վերահսկողության տակ անցած Արցախի համայնքի հաշվառում: Նշված միջոցառման շրջանակում միանվագ դրամական օգնություն է տրամադրվել յուրաքանչյուր շահառուին 300 000-ական դրամի չափով: Հիմնական պայմանն էր՝ մինչև 2020 թվականի սեպտեմբերի 27-ը առնվազն վերջին 3 ամիսը փաստացի բնակություն Ադրբեջանի վերահսկողության տակ անցած Արցախի համայնքում[2]:

· Աջակցության մեկ այլ ծրագրի շրջանակներում միանվագ դրամական օգնություն է տրամադրվել ԱՀ-ում հաշվառված և հաշվառման հասցեում գտնվող բնակելի անշարժ գույքը Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմի պատճառած ավերածությունների հետևանքով կամ այլ պատճառներով կորցրած քաղաքացիներին, ովքեր հանդիսանում են 2020թ. սեպտեմբերի 27-ից Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմի ընթացքում Արցախում ավերված անշարժ

---

[1] *«Արցախում հաշվառված քաղաքացիներին աջակցության միջոցառումը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության N 1799-Լ, որոշում, ընդունված է 16.11.2020*

[2] *«2020 թվականի սեպտեմբերի 27-ից Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության դեմ սկսված պատերազմական գործողությունների հետևանքով Ադրբեջանի Հանրապետության վերահսկողության տակ անցած համայնքներում հաշվառված քաղաքացիների աջակցության միջոցառումը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության N 1820-Լ, որոշում, ընդունված է 21.11.2020:*

գույքի սեփականատեր և ընտանիքի անդամներ: Ընտանիքի յուրաքանչյուր անդամին տրամադրվել է 250,000 ՀՀ դրամ[1]:

· Պատերազմի հետևանքով Արցախի Հանրապետությունից տեղահանված կամ Արցախի Հանրապետությունում բնակելի անշարժ գույքը կորցրած քաղաքացիներին 6 ամիս ժամկետով ամսական դրամական օգնություն տրամադրելու միջոցառման շրջանակներում սոցիալական աջակցությունը տրամադրվել է ամենամյա դրամական օգնության ձևով՝ 2021 թվականի սեպտեմբեր-դեկտեմբեր և 2022թ. հունվար-փետրվար ամիսների համար: Այս միջոցառման շահառու են հանդիսանում նախորդ 2 միջոցառումների շահառուները: Տվյալ ամսվա դրամական օգնության ամսական չափը կազմում է այդ ամսվա 1-ի դրությամբ՝ երեխաների, 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց համար՝ 50000 դրամ՝ 2021 թվականի սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների համար, և 40000 դրամ՝ 2022 թվականի հունվար և փետրվար ամիսների համար, իսկ այլ շահառուների համար՝ 25000 դրամ՝ 2021 թվականի սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների համար, և 20000 դրամ՝ 2022 թվականի հունվար և փետրվար ամիսների համար[2]:

· Վերոնշյալ միջոցառման շահառու չհանդիսացող՝ 2021 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ Արցախի Հանրապետությունում կենսաթոշակ կամ պարգևավճար ստանալու իրավունք ունեցող անձանց, բացառությամբ «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» օրենքով սահմանված կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող անձանց և 2021 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ 18 տարին չլրացած երեխաներին Արցախի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին 2022թ. հունվար ամսվա համար տրամադրվել է միանվագ դրամական օգնություն՝ 50 000 ՀՀ դրամի չափով:

· Իրականացվել է նաև 2020 թվականի սեպտեմբերի 27-ից Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության ուղղությամբ սկսված ռազմական գործողությունների հետևանքով Արցախի

---

[1] *«Արցախի Հանրապետությունում հաշվառված և հաշվառման կամ փաստացի բնակման հասցեում գտնվող բնակելի անշարժ գույքը Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմի պատճառած ավերածությունների հետևանքով կամ այլ պատճառներով կորցրած քաղաքացիների աջակցության միջոցառումը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության N 2021-Լ որոշում, ընդունված է 10.12.2020*

[2] *«Պատերազմի հետևանքով Արցախի Հանրապետությունից տեղահանված կամ Արցախի Հանրապետությունում բնակելի անշարժ գույքը կորցրած քաղաքացիներին 6 ամիս ժամկետով ամսական դրամական օգնություն տրամադրելու միջոցառումը և կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության N 1709-Լ որոշում, ընդունված է 18.10.2021*

Հանրապետության վերահսկողությունից դուրս մնացած համայնքներում հաշվառված չափահաս քաղաքացիներին ժամանակավոր հյուրընկալողների ծախսերի փոխհատուցման սոցիալական աջակցության միջոցառումը, որի շահառու էր համարվում ՀՀ-ում և Արցախում անշարժ գույք ունեցող և 2020թ. սեպտեմբերի 27-ից հետո Ադրբեջանի վերահսկողության տակ անցած Արցախի բնակավայրերում հաշվառված Արցախի քաղաքացիներին հյուրընկալող անձը: Յուրաքանչյուր հյուրընկալած չափահաս անձի համար աջակցության գումարը կազմում էր 30,000 ՀՀ դրամ՝ ՀՀ-ում, 45 000 ՀՀ դրամ՝ Արցախում: Աջակցությունը փոխանցվում էր սեփականատիրոջ բանկային հաշվեհամարին: Միջոցառումը գործել է 6 ամիս՝ 2020թ. դեկտեմբերից մինչև 2021թ. մայիսը ներառյալ՝ Արցախում և 9 ամիս՝ 2020թ. դեկտեմբերից մինչև 2021թ. օգոստոսը՝ ՀՀ-ում[1]:

· Սոցիալական աջակցության հաջորդ ծրագիրը վերաբերում է 2020 թվականի սեպտեմբերի 27-ից Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության ուղղությամբ սկսված պատերազմական գործողությունների հետևանքով քաղաքացիական անձանց շրջանում զոհերի ընտանիքներին և հաշմանդամություն ձեռք բերած անձանց, ովքեր ունեն ՀՀ և Արցախի հաշվառում: Անձի զոհվելու դեպքում զոհվածի ընտանիքին տրվում է 5 000 000 ՀՀ դրամ, անձի 1-ին, 2-րդ և 3-րդ խմբի հաշմանդամություն ձեռք բերելու դեպքում՝ համապատասխանաբար 3 000 000, 2 000 000 և 1 000 000 ՀՀ դրամ, իսկ հաշմանդամ երեխայի կարգավիճակ ձեռք բերելու դեպքում 3 000 000 ՀՀ դրամ միանվագ դրամական օգնություն[2]: Քաղաքացիական անձանց շրջանում անհայտ կորած, ինչպես նաև գերեվարված անձանց ընտանիքների անդամներն նույնպես հանդիսանում են՝ 2020 թ. ռազմական գործողությունների հետևանքով քաղաքացիական անձանց շրջանում զոհերի ընտանիքներին և հաշմանդամություն ձեռք բերած քաղաքացիներին տրամադրվող

---

[1] *«2020 թվականի սեպտեմբերի 27-ից Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության ուղղությամբ սկսված ռազմական գործողությունների հետևանքով Արցախի Հանրապետության վերահսկողությունից դուրս մնացած համայնքներում հաշվառված չափահաս քաղաքացիներին ժամանակավոր հյուրընկալողների ծախսերի փոխհատուցման վեցամսյա սոցիալական աջակցության միջոցառումը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության N 1997-Լ որոշում, ընդունված է 03.12.2020:*

[2] *«2020 թվականի սեպտեմբերի 27-ից Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության ուղղությամբ սկսված պատերազմական գործողությունների հետևանքով քաղաքացիական անձանց շրջանում զոհերի, ինչպես նաև անհայտ կորածների ընտանիքներին և հաշմանդամություն ձեռք բերած անձանց սոցիալական աջակցության տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության N 2082-Լ որոշում, ընդունված է 17.12.2020:*

սոցիալական աջակցության ծրագրի շահառու: Նրանց տրամադրվում է 1,000,000 դրամի չափով միանվագ աջակցություն[1]:

· Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով անհայտ կորած զինծառայողների ընտանիքների աջակցության միջոցառման շրջանակներում ամենամսյա դրամական վճարի ձևով տրամադրվում է սոցիալական աջակցություն՝ յուրաքանչյուր անհայտ կորած զինծառայողի հաշվով ամսական 300 000 դրամի չափով, բայց ոչ ավելի, քան 15 ամսվա համար միջոցառումը հաստատելու ամսվանից (հաստատվել է 14.12.2020թ.-ին): Դրամական վճարը տրամադրվում է անհայտ կորած զինծառայողի ամուսնուն և ծնողին[2]:

· Ինչ վերաբերում է 2020 թվականի սեպտեմբերի 27-ից Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով վիրավորում ստացած զինծառայողներին տրամադրվող սոցիալական աջակցության միջոցառմանը աջակցությունը տրամադրվում է միանվագ դրամական օգնության ձևով՝ ռազմական գործողությունների հետևանքով վիրավորում ստացած՝ բժշկական հաստատություններում բժշկական օգնություն և սպասարկում ստացող (ստացած) անձանց, ովքեր չունեն հաշմանդամության խումբ կամ ունեն կամ կարող են ունենալ հաշմանդամության երրորդ խումբ՝ յուրաքանչյուր շահառուին 500 000 դրամի չափով:[3]

· Պատերազմի տնտեսական և սոցիալական հետևանքները մեղմելու համար ամենամսյա դրամական օգնության ձևով՝ ոչ ավելի, քան 4 ամսվա համար 68 000 ՀՀ դրամի չափով սոցիալական աջակցություն է տրամադրվել ԱՀ-ում հաշվառված կամ փաստացի բնակված քաղաքացիներին, բացառությամբ 18-63 տարեկան արական սեռի այն անձանց, ովքեր չեն հանդիսանում հաշմանդամություն ունեցող անձ կամ չունեն կենսաթոշակ կամ պարգևավճար ստանալու իրավունք: Աջակցությունը տրամադրվել է սկսած 2021թ. մարտ ամսից[4]:

---

[1] http://mss.nkr.am/?p=20905

[2] *«Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով անհայտ կորած զինծառայողների ընտանիքների աջակցության միջոցառումը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության N 2001-Լ որոշում, ընդունված է 10.12.2020*

[3] https://dimum.ssa.am/index.php?r=application%2Fwounded-app

[4] *«Արցախի Հանրապետությունում հաշվառված կամ փաստացի բնակված քաղաքացիներին 4 ամիս ժամկետով ամսական դրամական օգնություն տրամադրելու միջոցառումը հաստատելու մասին», ՀՀ Կառավարության N 186-Լ որոշում, ընդունված է 12.02.2021*

· ԱՀ պետական բյուջեի միջոցների հաշվին նշանակվում ու վճարվում է միանվագ դրամական օգնություն վերոնշյալ ծրագրով տրամադրված դրամական օգնության առնվազն մեկ ամսվա վճարացուցակում չընդգրկված՝ մինչև 2021 թվականի փետրվարի 10-ը (ներառյալ) ծնված և Արցախի Հանրապետությունում բնակվող (բնակված) շահառուներին[1]:

· Պատերազմական գործողությունների հետևանքով Արցախի Հանրապետության վերահսկողությունից ժամանակավոր դուրս մնացած բնակավայրում հաշվառված քաղաքացու մահվան դեպքում նրա հուղարկավորությունը կատարած անձին նշանակվում և վճարվում է 200 000 ՀՀ դրամի չափով թաղման նպաստ՝ Արցախի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին[2]:

· 2020-2021թթ. ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ուսման վարձի 100%-ի չափով փոխհատուցում է տրամադրվել 2020 թվականի սեպտեմբերի 27-ից Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմի ընթացքում մարտական գործողությունների մասնակից սովորողների, ինչպես նաև պատերազմի ընթացքում մարտական գործողությունների մասնակից անձանց սովորող երեխաների և սովորող ամուսնու համար[3]:

· Սեպտեմբերի 1-ի՝ գիտելիքի և դպրության օրվա կապակցությամբ որոշակի կարգավիճակի երեխաներին խրախուսելու նպատակով՝ ԱՀ պաշտպանության ժամանակ մարտական գործողություններին մասնակցելու հետևանքով, ինչպես նաև ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների՝ տվյալ տարվա սեպտեմբերի 1-ի դրությամբ պետական նպաստի իրավունք ունեցող երեխաներին ԱՀ պետական բյուջեի միջոցների

---

[1] *«ԱՀ-ում հաշվառված կամ փաստացի բնակված առանձին խմբերի անձանց համար միանվագ դրամական օգնություն սահմանելու և միանվագ դրամական օգնության նշանակման ու վճարման կարգը հաստատելու մասին» ԱՀ Կառավարության N 1390-Ն որոշում, ընդունված է 20.12.2021 :*

[2] *«2020 թվականի սեպտեմբերի 27-ին ԱՀ դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների հետևանքով ԱՀ վերահսկողությունից ժամանակավոր դուրս մնացած բնակավայրերում հաշվառված քաղաքացու մահվան դեպքում թաղման նպաստ սահմանելու և թաղման նպաստի նշանակման ու վճարման կարգը հաստատելու մասին» ԱՀ Կառավարության N 893-Ն որոշում, ընդունված է 10.08.2021 :*

[3] *«2020 թվականի սեպտեմբերի 27-ից Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմի ընթացքում մարտական գործողությունների մասնակից անձանց սովորող երեխաների և սովորող ամուսնու ուսման վարձի փոխհատուցման միջոցառումը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության N 2008-Լ որոշում, ընդունված է 10.12.2020 :*

հաշվին տրամադրվում է 30 000 դրամի չափով միանվագ դրամական օգնություն[1]:

· Գործում է նաև 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների հետևանքով դժվար կացության մեջ հայտնված ֆիզիկական և իրավաբանական անձանց վարկային պարտավորությունների կատարմանն ուղղված պետական ֆինանսական աջակցության ծրագիր, որով սահմանված միջոցառումները ուղղված են հիփոթեքային, սպառողական և բիզնես վարկային պարտավորությունների կատարմանը: Այս ծրագիրը նպատակ ունի նպաստել 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների հետևանքով դժվար կենսապայմաններում հայտնված բնակչության ֆինանսական վիճակի թեթևացմանը, սոցիալական ու հոգեկան լարվածության թուլացմանը, արտագաղթի կանխմանը, ինչպես նաև խթանել ներդրումները, գործարարությունն ու տնտեսական ակտիվությունը և նպաստել բանկային համակարգի ֆինանսական կայունության պահպանմանը[2]:

<u>Զբաղվածության ծրագրեր</u>

· ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից իրականացվող «Վարձատրվող հասարակական աշխատանքերի կազմակերպում» ծրագրի նպատակն է Արցախի Հանրապետության գործազուրկ քաղաքացիներին ընդգրկել համայնքներում իրականացվող վարձատրվող հասարակական աշխատանքներում: Մեկ աշխատանքային օրվա համար վճարը 8000 դրամ է՝ ներառյալ եկամտային հարկը և պարտադիր վճարները: Ծրագրում ընդգրկվել կարող են պատերազմի հետևանքով տեղահանված և փաստացի Հայաստանի Հանրապետությունում գտնվող այն անձինք, որոնք հաշվառված են և մինչև 2020 թվականի սեպտեմբերի 27-ը առնվազն վերջին 3 ամիսը փաստացի բնակվել են Ադրբեջանի Հանրապետության վերահսկողության տակ անցած

---

[1] *«ԱՀ պաշտպանության ժամանակ մարտական գործողություններին մասնակցելու հետևանքով, ինչպես նաև ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների նպաստառու երեխաներին միանվագ դրամական օգնություն տրամադրելու մասին» ԱՀ Կառավարության N 464-Ն որոշում ընդունված է 30.07.2009 :*

[2] *«2020 թվականի սեպտեմբերի 27-ին ԱՀ դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների հետևանքով դժվար կացության մեջ հայտնված ֆիզիկական և իրավաբանական անձանց վարկային պարտավորությունների կատարմանն ուղղված պետական ֆինանսական աջակցության ծրագիրը հաստատելու մասին» ԱՀ Կառավարության N 222-Ն որոշում, ընդունված է 17.03.2021:*

համայնքներում (տե՛ս ՀՀ Կառավարության 2020 թվականի նոյեմբերի 21-ի N 1820-Լ որոշումը):

· «Աշխատանքային փորձ ձեռք բերելու համար աջակցության տրամադրում» ծրագիրը իրականացվում է Արցախի Հանրապետության գործազուրկ քաղաքացիներին՝ աշխատանքային փորձ ձեռք բերելու, աշխատաշուկայում առավել մրցունակ դառնալու և ժամանակավոր աշխատանքի տեղավորվելու նպատակով: Ծրագրի տևողությունը երեք ամիս է: Ծրագրի շրջանակներում շահառուին վճարվում է՝ ամսական աշխատավարձ՝ 100000 դրամի չափով, իսկ գործատուին փոխհատուցվում է շահառուի աշխատավարձից հաշվարկվող եկամտային հարկը, դրոշմանիշային վճարը և օրենքով սահմանված դեպքերում՝ սոցիալական վճարը: Ծրագրի շրջանակներում ամսական 34000 դրամի չափով վարձատրվում է նաև գործատուի մոտ աշխատանքային փորձի ձեռքբերման գործընթացը կազմակերպող մասնագետը: Ծրագրում ընդգրկվել կարող են պատերազմի հետևանքով տեղահանված և փաստացի Հայաստանի Հանրապետությունում գտնվող այն անձինք, որոնք հաշվառված են և մինչև 2020 թվականի սեպտեմբերի 27-ը առնվազն վերջին 3 ամիսը փաստացի բնակվել են Ադրբեջանի հանրապետության վերահսկողության տակ անցած համայնքներում (տե՛ս ՀՀ կառավարության 2020 թվականի նոյեմբերի 21-ի N 1820-Լ որոշումը):[1]

Բնակարանային ապահովման ծրագիր

· 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների հետևանքով զոհված (մահացած) և անհայտ բացակայող ճանաչված անձանց ընտանիքների, 1-ին խմբի անժամկետ հաշմանդամ ճանաչված և (կամ) անօթևան մնացած անձանց բնակարանային ապահովման ծրագրի նպատակն է երեք տարվա ընթացքում լուծել 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների հետևանքով զոհված (մահացած) և անհայտ բացակայող ճանաչված անձանց ընտանիքների, ինչպես նաև 1-ին խմբի անժամկետ հաշմանդամ ճանաչված և (կամ) անօթևան մնացած անձանց բնակարանային ապահովման խնդիրը՝ նպաստելով Արցախի Հանրապետությունում նրանց հետագա բնականոն կեցությանն ու գործունեությանը[2]:

---

[1] *https://employment.am/am/online_application.html*

[2] *«2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների հետևանքով զոհված (մահացած) և անհայտ բացակայող ճանաչված անձանց ընտանիքների, 1-ին խմբի անժամկետ հաշմանդամ*